Հայցվորի կողմից ներկայացվել է 100.000 դրամ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ, որի մասով՝ հաշվի առնելով հայցի մասնակի բավարարումը, Դատարանը գտնում է, որ երկու պահանջների բավարարման արդյունքում 67.000 ՀՀ դրամը ենթակա է բռնագանձման Պատասխանողից հօգուտ Հայցվորի, իսկ մնացած 33000 դրամ գումարի մասով ծախսը պետք է կրի Հայցվոր կողմը և հաշվի առնելով դրա նախապես վճարված լինելը, այդ մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հայցվորը պահանջել է անդրադառնալ նաև փաստաբանական ծախսին, որի առնչությամբ ներկայացվել է Հայցվոր ընկերության և «Պետգնումների կենտրոն» ՍՊ ընկերության միջև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, իսկ դատարանում ընկերության շահերը ներկայացվել են լիազորված անձ Արև Կամոյի Հարությունյանի կողմից, որի առնչությունը «Պետգնումների կենտրոն» ՍՊ ընկերությանը ներկայացված չէ:

Հաշվի առնելով ՔԴՕ 108-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, Դատարանը գտնում է, որ ծախսերի կրման պատշաճ հիմնավորում առկա չէ, հետևաբար այդ մասով դատական ծախսի պահանջը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Թիվ ԵԴ/3580/02/23 քաղաքացիական գործով «Ջի Էմ Պրո» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բավարարել մասնակի՝

1.1. թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2022թ. որոշումը մասնակի՝ 3-րդ չափաբաժնի մասով (թիվ 3 արձանագրության 9.1.1. կետ) ճանաչել անվավեր, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել 23.01.2023թ. հրապարակված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը մասնակի՝ 3-րդ չափաբաժնով Ընկերության կողմից հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ ճանաչվելու մասով:

1.2. «Ջի Էմ Պրո» ՍՊ ընկերությանը ճանաչել թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի ընտրված մասնակից:

1.3. Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Ընկերության հետ պայմանագիր կնքելուն պատասխանողին հարկադրելու պահանջի մասով հայցը մերժել:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամից հօգուտ «Ջի Էմ Պրո» ՍՊ ընկերության բռնագանձել 67.000 (վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար. Մնացած մասով դատակա ծախսերի պահանջը մերժել: Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ**